ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Խաչիկ Խաչատրյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների վերլուծության բաժնի պետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), հունիսի 3-ից 14-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Արժույթի միջազգային հիմնադրամ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակն էր մասնակցել Վիեննայի միացյալ ինստիտուտում կազմակերվող՝ «Ներառական աճ/ Inclusive Growth» թեմայով դասընթացին՝ մասնագիտական գիտելիքները զարգացնելու նպատակով:

5. **Քննարկված թեմաները.**

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, ներկայացվել են հետևյալ թեմաները.

1) Ներառական աճի ներածություն,

2) Աճի տեսություն և աճի հաշվարկ,

3) Աճի ներառականության չափումը,

4) Աճի ախտորոշում,

5) Հարկաբյուջետային քաղաքականությունը և ներառական աճը,

6) Գենդերային անհավասարություն,

7) Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը անհավասարության վրա Ավստրիայում,

8) Աշխատուժի շուկայի քաղաքականություններ,

9) Արհեստական բանականության ազդեցությունն անհավասարության վրա,

10) Ներառական աճը և կառավարումը,

11) Մարդկային կապիտալ,

12) Ներառական աճը և կլիմայի փոփոխությունը,

13) Ֆինանսական նեռառականություն,

14) Ֆինանսական նեռառականությունը կենտրոնական, արևելյան և հարավ-արևելյան Եվրոպայում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Առանձին հանդիպումներ և ելույթներ տեղի չեն ունեցել, դասընթացի վերջում Ռումինիայի տնտեսության օրինակով կատարվել է խմբային աշխատանք տնտեսության ախտորոշան և ներառական աճի ապահովման առաջարկություններ ներկայացնելու նպատակով, որի հիման վրա պատրաստվել և ներկայացվել է ամփոփիչ ներկայացում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում առանձին անդրադարձ է կատարվել հարկային քաղաքականության միջոցով անհավասարության մեղմման ուղղություններին, որոնց կիրառումը մեծ օգուտ կտա ապագայում իրականացվելիք քաղաքականության փոփոխություններին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Եկամուտների վերլուծության
բաժնի պետ

Խաչիկ Խաչատրյան
19 հունիսի 2024թ.